Վարձկալութեան համար—Տ. Ղևոնդ վարդապետ.

Ադարակի համար—Տ. Մկրտիչ վարդապետ։

Այս չորս տեսուչներ համախորհուրդ պիտի գործեն վանական կառավարութեան անունով։

ՊԱՐԱԿԱՀԱՅՊ

Առաջնորդական ընտրութեան խնդիրն ահա մի ամբողջ տարի է, ինչ ձգձգւում է և ահագին վնաս հասցնում թեմին։ Երկու փոխանորդներն էլ, չնայելով ծերունի Հայրապետից ստացած բաղմաթիւ կոնդակներին, երկար ձգձգումից յետոյ և վերջին փոխանորդին պաշտօնազուրկ անելու սպառնալիքով, հաղիւ հարկադրեց, որ յունվարի 2-ին առաջնորդական ընտրութիւն կատարուի. սակայն այստեղ էլ ժամանակ վատնելու և թեմի անտէր կացութեամբ օգտուելու համար նախ կանոնադրութեան ոգու հակառակ պայման է դրուել թեկնածուների վերաբերութեամբ և երկրորդ այնպիսի մի անձի ընտրեցին, որը թեմ ունի, վայելում է իւր ժողովրդի համակրութիւնը և այդ պատճառով էլ չը համաձայնուեց դալ Ամերիկայից Թաւրիզ, մանաւանդ յիշելով իրեն հետ խաղացած խաղերը։

Ասում ենք, որ այդ ընտրութիւնը ժամանակ վատնելու համար էր որոշ մարդկանց կողմից և դրան որպէս ապացոյց ծառայում է այն հանգամանքը, որ թեմական ժողովի և պատգամաւորների հետ ոչ մի կապ չունեցող և ոչ ոքից հաւատարմութիւնք չը ստացած մի ռուսաստանցի արհեստաւոր, վստահացել էր մտնել Վեհափառի մոտ և խնդրել, որ առաջնորդական ընտրութիւնը յետաձգուի մինչև մայիսի վերջը։ «Պատգամաւորները ոչ ոքի չեն ճանաչում մեր հոգևորականներից. յետաձգեցէք ընտրութիւնները մինչև մայիսի վերջը, որպէս զի մարդ գտնենք» ասում էր նա։

Ո՞վ էր նա, ո՞ւմ անունիցն էր խօսում, ո՞ր տեղ և ինչ մարդ պէտք է գտնէր, ի հարկէ այս հարցերը ժամանակին դրուեցան և Վեհափառ Հայրապետը հեռագրով տեղեկագրելով, որ Սաքաջեան Ցոլոէի արքեպիսկոպոսը չի գալու, հրամայեց կատա-

բել նոր ընտրութիւն, իսկ եթէ, ինչպէս ինքնակոչ լիազօր պարոնն էր ասում, պատգամաւորները թեկնածու չեն գտնել, «զիմել Վեհափառ Հայրապետին»: Սակայն այդ հրամանն էլ չ՝օգնեց և հետզհետէ ստացուեցին նորանոր տեղեկութիւններ Առաջնորդական խնդրի շուրջը կատարուած զանազան խաղերի մասին: Այս բոլորից ձանձրանալով Ծերունազարդ Հայրապետը, հրամայեց Սինօդի անդամ Տ. Մատթէոս վարդապետին մեկնել Թաւրիզ, անմիջապէս Սալմաստ ուղարկել Մաշտոց վարդապետ Փափազեանին, Մեսրոպ վարդապետ Մադուտեանին ուղարկել Ղարադաղ Յուժի վանահայր. նախադահել Թաւրիզում պատգամաւորական ժողովին, ընտրել տալ և ընտրեալի հաստատութիւնից յետոյ միայն վերադառնալ Ս. Էջմիածին: Վեց շաբաթուայ արձակուրդի և անցագրի համար հեռագրով դիմումն եղաւ ուր հարկաւոր է և Մատթէոս վարդապետը մեկնեց Թաւրիզ: Յոյս ունինք, որ այս անդամ վերջ կը դրուի զանազան խաղերին և Ատրպատականը վերջապէս առաջնորդ կ՝ունենայ:

Ստացանք Թաւրիզի հայուհեաց միացեալ բարեգործական ընկերութեան 1903 և 1904 թուի տեղեկագիր հաշուեցոյցը: Պէտք է ասել, որ Ատրպատականի ամենամեծ մխիթարութիւններից մէկն է այդ ընկերութիւնը և շատ մեծ դեր է կատարում կրթական գործում: Նա անցեալ տարի պահել է տասն և մէկ դպրոց, երկու մանկապարտէզ և ս. Աննայեան դպրոցի չորրորդ դասարանը, որտեղից աւարտածները պէտք է կարողանան դիւղական վարժուհու պաշտօն վարել և ազատել Ատրպատականը վարժուհի գտնելու մեծամեծ դժուարութիւններից: Ընկերութիւնն անցեալ տարի մուտք է ունեցել 35,429 ղրան, իսկ ծախսը 40,045 ղրան. ընկերութեան դրամագլուխը 106,290 ղրան: Որքան տեղեկութիւն ունինք դրամագլխի մի մասը մնում է Սևան ընկերութեան անդամների վրայ, որոնք դժուարութիւններ էին յարուցանում իրենց վրայ եղած գումարը շուտով ըստ պատկանելոյն վերադարձնելու: Յոյս ունինք, որ նրանք յանձն կառնեն ընկերութեան պարտքն իրենց վրայ՝ ինչպէս և պարտաւոր են և ամեն ճիգ գործ կը դնեն ամբողջ գումարը ժամանակին վերադարձնելու: Հակառակ դէպքում նրանք կողոպտած կլինին Ատրպատականի նոր սերնդի յոյսն ու լոյսը և անէծք կը ժառանգեն նրանցից: Վստահ, որ ընկերութեան անդամները յանձն կառնեն ամեն տեսակ զրկանք՝ օր առաջ պարտահատոյց լինելու, բարեգործ անձանց ուշադրու-

թիւնն ենք հրաւիրում Առաքաստական Հայութեան կրթական գործի և դրա համար եռանդուն կերպով աշխատող Հայուհեաց Միացեալ Բարեգործական Ընկերութեան վրայ, որին ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

Ռուսաց սրբազան Սինոդի որոշումը.

Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան կառավարիչ սրբազան Սինոդը դիտողութեան առաւ սուրբ պատարագի ժամանակ կարդացուող քարոզը: Հրամայեցին. ի նկատի առնելով եղած դիտողութիւնները, սրբազան Սինոդը որոշում է վերականգնել պատարագի ժամանակ 1881 թուի մայիսի 8-ի հրամանով որոշուած քարոզի ընթերցանութիւնը, որի բովանդակութիւնը հետևեալն է.—

«Վասն ներելոյ մեզ զյանցանս և զանօրէնութիւնս մեր և ջնջելոյ ի մէնջ զխռովութիւնս թշնամեաց զՏէր աղաչեսցուք»:

«Վասն հաստատութեան յերկրի մերում անդորրութեան, խաղաղութեան և բարեպաշտութեան զՏէր աղաչեսցուք»:

Քարոզի յիշեալ հատուածների ընթերցանութիւնը պատարագի ժամանակ Սինոդը մոցրել է պրաւոսլաւ ռուսաց եկեղեցիներում վերջերս տեղի ունեցած ներքին խռովութիւնների պատճառով:

Թէ որքան անճիշտ տեղեկութիւններ են տալիս արտասահմանեան թերթերը ռուսատանի ներքին գործերի մասին, այդ երևաց վերջերս հաղորդած տեղեկութիւններից, որոնց մէջ յիշուած էր, որ Պետերբուրգի բանտարական շարժման դլուխ էին անցել կրօնշտադի Տէր Յովհաննէսը և Տէր Գէորգ Գապօնը. մինչդեռ ինչպէս ընթերցողները գիտեն, հայր Յոան կրօնշտադսկին մի խաղաղասէր կրօնաւոր է և միայն աղօթել գիտէ հեռաւոր վայրերից դիմողների և իրեն շուրջը կրօնշտադ հաւաքուողների